ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան փ., շ. 55, Հեռ. (060)700131

N 596-25
13 մարտ 2025 թ.

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ
ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովհաննիսյան

Դիլիջանի համայնքապետարանի և «ԱՐՏԴԻԱՆՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 27.09.2022 կնքվել է Դիլիջան համայնքի մշքակույթի պալատի հիմնանորոգման աշխատանքների ՀՀ-ՏՄԴՀ-ԲՄԱՇՁԲ-22/03 ծածկագրով պայմանագիրը: Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն կատարվել պայմանագրային պարտավորությունները: Դիլիջանի համայնքապետարանի կողմից միակողմանի լուծվել է պայմանագիրը, այդ մասին ծանուցվել է ընկերությանը, ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում: Գրությամբ առաջարկվել է մինչև ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցեղ մասնակիցների ցուցակում ներառելու պատվիրատուի ղեկավարի որոշման կայացման վերջնաժամկետը լրանալու օրը վճարել պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, որն ընկերության կողմից չի կատարվել:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ Պատվիրատուն գտնում է, որ ՀՀ-ՏՄԴՀ-ԲՄԱՇՁԲ-22/03 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ԱՐՏԴԻԱՆՇԻՆ» ՍՊԸ -ին անհրաժեշտ է ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ստորև ներկայացնում եմ «ԱՐՏԴԻԱՆՇԻՆ» ՍՊԸ -ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները:

Մասնակցի				
անվանումը	ՀՎՀՀ ֆիզ.անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	Գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը	Ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը

			Խախտել է գնման գործընթացի շրջանակու ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	Խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը համգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	Որպես ընտրված մասնակից հրաժարվել է կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ԱՐՏԴԻԱՆՇԻՆ» ՍՊԸ	04112378	Ք. Արարատ, Գրիբոյեդովի 24		V		12.03.2025 ՀՀ-ՏՄԴՀ-ԲՄԱՇՁԲ-22/03

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**